ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

№ 2013-1-1-Ա

ք. Երևան 23 .05.2013թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2013 թվականի մայիսի 14-ի նիստում քննարկեց արտոնագրային հավատարմատար Արեգ Պետրոսյանի կողմից ներկայացված՝ գերմանական «Lanxess Deutschland GmbH» ընկերության (այսուհետ՝ բողոքարկող) բողոքը «Պոլիմերային պինդ նյութերի ստացման եղանակ» գյուտի (հայտ N AM20110141) արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին գործակալության որոշման դեմ:

Բողոքարկողի՝ 07.03.2013թ. դիմումի համաձայն բողոքարկման խորհուրդը 2013 թվականի մարտի 12-ի նիստում իր համաձայնությունը տվեց գործի քննարկումը 2 ամսով հետաձգելու մասին, լրացուցիչ նյութեր ներկայացնելու անհրաժեշտությունից ելնելով: Դիմումում նշված է, որ բողոքարկման խորհուրդ կներկայացվեն ապացույցներ առ այն, որ գյուտի հավակնության սահմանման 1-7-րդ կետերն այնուամենայնիվ օժտված են նորությամբ և գյուտարարական մակարդակով: Նշված լրացուցիչ նյութերը ստացվել են 26.04.2013թ.:

Գյուտի հայտը մերժվել է հետևյալ հիմքերով.

Գործակալությունն իր 11.10.2012թ. որոշման համաձայն մերժել է արտոնագիր տալն ամբողջությամբ, քանի որ ներկայացված հավակնության սահմանմամբ հայտարկված գյուտն առաջին հայացքից (ակնհայտորեն, բացահայտորեն) չի համապատասխանում «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 11-րդ և 13-րդ հոդվածներով սահմանված արտոնագրաունակության պայմաններին, մասնավորապես՝ նորության պայմանին:

Գյուտի հավակնության սահմանման 1-ին անկախ կետում հայտարկված եղանակը բնութագրվում է երկու էական հատկանիշների համախմբությամբ, որոնք առանձին առանձին հայտնի են տեխնիկայի մակարդակից, մասնավորապես հետևյալ տեղեկատվության աղբյուրներից՝ GB-A-2 432 584, 30 May 2007, կամ EP-A-1 837 366, 26 September2007, կամ US 2002/002217 A1, 3 January 2002, կամ EP-A-2 025 732, 18 February 2009, կամ WO 2006/039568, 13 April 2006, որոնցում նկարագրված է պոլիմերային լատեքսի մեջ ածղածնի երկօքսիդի ներմուծումը՝ դրա pH-ի առժեքն իջեցնելու համար:

Ինչ վերաբերում է հավակնության սահմանման մյուս՝ 8-րդ անկախ կետին, ապա նշվել է, որ արտադրանքն եղանակի միջոցով ստանալը, որպես գյուտի առարկա կարող է պաշտպանվել անկախ կետով միայն այն դեպքում, երբ այդ արտադրանքը նոր է: Վերը շարադրած տեղեկատվության աղբյուրներներում բացահայտված են պոլիմերային լատեքսներից ստացված օժանդակ էմուլսարաներ չպարունակող պինդ պոլիմերային նյութեր:

Հավակնության սահմանման 11-րդ անկախ կետը նույնպես լայնորեն հայտնի է, մասնավորապես՝ պոլիքլորոպրենի կիրառումը կաուչուկի, ռետինի և սոսնձող նյութերի արտադրության համար (տես՝ «Хлоропреновые каучуки», http://www.xumuk.ru/encyklopedia/2/5057.html:

Գործակալությունն իր 11.10.2012թ. որոշումը կայացնելիս հիմնվել է նաև նախնական փորձաքննության արդյունքների վերաբերյալ միջազգային մասնագիտացված որոնման կենտրոնի կողմից տրված տեղեկանքի վրա, համաձայն որի հակադրվել են թվով 5՝ D1-ից - D5 տեղեկատվության աղբյուրներ, որտեղ բացահայտված են ներկայացված գյուտի հավակնության սահմանման էական հատկանիշները:

Բողոքի համաձայն՝ խնդրարկվում է չեղյալ ճանաչել գործակալության 11.10.2012թ. որոշումը և տալ արտոնագիր հայտարկված գյուտին հետևյալ պատճառաբանությամբ:

Վերլուծելով D1-D5 տեղեկատվության աղբյուրներում նկարագրված տեխնիկական լուծումները բողոքարկողը գտնում է, որ ոչ մեկում չի նկարագրված հայտարկված եղանակը, որում 9-ից բարձր pH-ով սկզբնական պոլիմերային դիսպերսիան գազակերպ ածղածնի երկօքսիդ ավելացնելու միջոցով հասցնում են 6-9 pH արժեքի, ինչից հետո իրականացնում են պոլիմերային դիսպերսիայի կոագուլում

սահքով և/կամ սառեցմամբ: Ամփոփելով, բողոքարկողն եզրակացնում է, որ «ներկայացված առաջարկը ոչ միայն օժտված է նորությամբ, այլ ունի գյուտարարական մակարդակ: Բողոքում բերվել է նաև հավակնության սահմանման ճշգրտված խմբագրությունը:

26.04.2013թ. բողոքարկման խորհուրդ ներկայացված լրացուցիչ նյութերում բերված են Եվրոպական արտոնագրային գերատեսչության հետ հայտատու՝ «Lanxess Deutschland GmbH» ընկերության նամակագրության մի մասը, այն է՝ երկու ծանուցում և 1-ին ծանուցման պատասխանը: Եվրոպական արտոնագրային գերատեսչության ծանուցումներում նծված է, որ «եղանակին վերաբերող 1-7 կետերը, հաշվի առնելով եղանակի առաջարկվող փուլերի հատուկ համակցությունը, նոր են հանդիսանում»: Ինչ վերաբերում է գյուտարարական մակարդակի պայմանին համապատասխանությանը, ապա հայտատուն դրա ն վերաբերող ապացույցներ չի ներկայացրել:

Լրացուցիչ նյութերում հայտատուն նաև նշում է, որ «փորձաքննությունը դուրս է եկել օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով իրեն վերապահված լիազորություններից: Դե ֆակտո անցկացրել է գյուտի լիարժեք, խորացված, ըստ էության փորձաքննություն, այն դեպքում, երբ պետք է ստուգվեր միայն հայտարկված գյուտի առաջին հայացքից (ակնհայտորեն, բացահայտորեն) համապատասխանությունը արտոնագրաունակության պայմաններին»:

Կոլեգիան քննարկելով ներկայացված բողոքում, ինչպես նաև լրացուցիչ նյութերում բերված հիմնավորումները գտնում է, որ գործակալության 11.10.2012թ. որոշումը մերժել գերմանական «Լենգսեսս Դոլչլանդ Գմբհ ընկերության հայտով «Պոլիմերային պինդ նյութերի ստացման եղանակ» գյուտի արտոնագիր տալն ամբողջությամբ օրինական է, և բողոքը պետք է մերժվի հետևյալ պատճառաբանությամբ:

Ըստ էության, PCT համաձայնագրի շրջանակներում ազգային փուլ արտոնագրման է ներկայացվել միջազգային հայտ, որին հայտատուի ցանկությամբ կարող էր կցվել նաև միջազգային մասնագիտացված որոնման կենտրոնի տեղեկանքը նախնական փորձաքննության արդյունքների վերաբերյալ: Տվյալ միջազգային հայտի նյութերում այն բացակայում էր: Փորձագետը հայտի սպառիչ լրիվությամբ ստուգում (փորձաքննություն) ապահովելու նպատակով Միջազգային բյուրոից հրապարակումներից վերցրել է այդ տեղեկանքը, համաձայն որի հակադրվել են թվով 5 տեղեկատվության աղբյուրներ (D1-D5), որոնցում բացահայտված են հավակնության

սահմանման էական հատկանիշները: Ինչից ելնելով միջազգային մասնագիտացված որոնման կենտրոնը տվել է նախնական եզրակացություն, առ այն որ գյուտը չի համապատասխանում արտոնագրաունակության պայմաններին՝ այն նոր չէ և չունի գյուտարարական մակարդակ:

Բողոքարկողը իր փաստարկներում նշում է, որ հակադրված նյութերում չի նկարագրվում հայտարկված եղանակը, այսինքն չկա մի հակադրված նյութ որտեղ բերված լինեն հավակնության սահմանման 1-ին անկախ կետի բոլոր հատկանիշները: Եթե նույնիսկ ընդունենք այդ փաստարկը, որ գյուտի հավակնության սահմանման 1-7 կետերը համապատասխանում են նորության պայմանին (ինչն պետք ապացուցվի փորձաքննությամբ), ապա քննարկելով բողոքարկողի կողմից բողոքում ներկայացված հավակնության սահմանման ուղղված խմբագրության 1-ին անկախ կետը կարելի է եզրակացնել, որ թվարկված էական հատկանիշները առանձին առանձին հայտնի են տեխնիկայի մակարդակից, հետևապես այդ անկախ կետը չի համապատասխանում օրենքի 13-րդ հոդվածով սահմանված գյուտարարական մակարդակի պայմանին, քանի որ միջին մասնագետի համար դա ակնհայտ է տեխնիկայի մակարդակից:

Ինչ վերաբերում է հավակնության սահմանման 8-րդ անկախ կետին, ապա բացի այն հանգամանքից, որ ինչպես նշվել է վերոհիշյալ տեղեկատվական աղբյուրներում բացահայտված են պոլիմերային լատեքսներից ստացված օժանդակ էմուլսիաներ չպարունակող պինդ պոլիմերային նյութեր, այն կրում է անորոշ բնույթ, մինչդեռ ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2009թ. մարտի 25-ի N 206 Ն հրամանով հաստատված՝ «Գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի հայտի ձևակերպման, ներկայացման և քննարկման» կարգի 3-րդ գլխի 16-րդ կետով սահմանված են միացությունը, որպես գյուտի առարկա բնութագրման պայմանները:

Բողոքարկողի այն կարծիքը, որ փորձաքննությունը դուրս է եկել օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով իրեն վերապահված լիազորություններից անհիմն է, քանի որ փորձաքննության տրամադրության տակ եղել էր միջազգային մասնագիտացված որոնման կենտրոնի տեղեկանքը նախնական փորձաքննության արդյունքների վերաբերյալ, և այն չէր կարող հաշվի չառնվեր տեխնիկայի մակարդակի որոշման և գյուտի արտոնագիր տալու կամ արտոնագիր տալը մերժելու վերաբերյալ համապատասխան որոշման կայացման հարցում: Մասնագիտացված որոնման կենտրոնի նախնական փորձաքննության արդյունքների վերաբերյալ եզրակացությունը

արդեն իսկ ապացույց է առաջին հայացքից գյուտի չհամապատասխանությանը նորության և գյուտարարական մակարդակի պայմաններին:

Բացի դրանից, 07.03.2013թ. բողոքի քննարկումն 2 անսով հետաձգելու մասին հայտատուի ներկայացուցչի դիմումում նշված է, որ կներկայացվեն ապացույցներ առ այն, որ գյուտի հավակնության սահմանման 1-7-րդ կետերն այնուամենայնիվ օժտված են նորությամբ և գյուտարարական մակարդակով: Սակայն հավակնության սահմանման 1-7-րդ կետերի գյուտարարական մակարդակով օժտված լինելը, ներկայացված նյութերում ապացուցված չէ:

Կոլեգիան գտնում է, որ գործակալության 11.10.2012թ. որոշումն օրինական է և համապատասխանում է օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի պահանջներին:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և գործակալության արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին որոշումը ուժի մեջ թողնելու վերաբերյալ:

Քննարկման արդյունքում բողոքարկման խորհուրդը պարզեց, որ համապատասխան որոշում կայացնելիս փորձաքննության տրամադրության տակ է եղել միջազգային մասնագիտացված որոնման կենտրոնի տեղեկանքը նախնական փորձաքննության արդյունքների վերաբերյալ և այն սահմանված կարգով հաշվի է առնվել մերժման մասին որոշում կայաացնելիս, քանի որ ըստ տեղեկանքի գյուտը չի համապատասխանում արտոնագրաունակության պայմաններին՝ գյուտը նոր չէ և չունի գյուտարարական մակարդակ: Բողոքարկման խորհուրդը համաձայնեց կոլեգիայի նախնական եզրակացությունում բերված հիմնավորումների հետ և նույնպես գտավ, որ գործակալության 11.10.2012թ. որոշումը կայացվել է օրինական հիմքերով, և բողոքն ենթակա է մերժման:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության

բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել գերմանական «Lanxess Deutschland GmbH» ընկերության կողմից ներկայացված «Պոլիմերային պինդ նյութերի ստացման եղանակ» գյուտի արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին գործակալության որոշման դեմ բողոքը և գործակալության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

Բողոքարկման խորհրդի նախագահ Գ. Մելքոնյան